Դպրոցահասակ Երեխաների Համար Ցերեկային Խնամք Տրամադրող Ծրագրերի Արձանագրություն

Վերջին Թարմացումները՝ (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)
4/28/2021. Թարմացվել է՝ արտացոլելու հաստատուն խմբերի առավելագույն չափի հետ կապված փոփոխությունները: Ավելացվել են մեծ սենյակների բաժանմանն ուղղված հրահանգներ՝ տեղադրելու մի քանի հաստատուն խմբեր:

Կաղապար է այլնում դիտելու

COVID-19-ով վարակման դեպքերը, հոսպիտալացումները և մահվան ցուցանիշները նվազել են, սակայն համայնքում վարակի փոխանցումը շարունակում է մնալ միջին մակարդակում: COVID-19-ը շարունակում է բարձր վտանգ ներկայացնել համայնքների համար, իսկ բոլոր անձանցից և բիզնեսներից պահանջվում է իրականացնել նախազգուշական միջոցառումներ և ձևափոխել գործողությունները ու գործունեությունն այնպես, որպեսզի նվազեցվի վարակի տարածման վտանգը: Ստորև ներկայացված հատուկ պահանջները վերաբերում են բոլոր ծրագրերին, ներառյալ՝ Վաղ խնամքի և Կրթական ծրագրերը (ECE) և այլ ծրագրեր, որոնք ցերեկային խնամք են տրամադրում դպրոցահասակ երեխաների համար՝ սովորական դպրոցական ժամերից առաջ, ընթացքում և հետո: Այս հաստատություններին թույլատրվում է վերաբացվել Նահանգի Առողջապահության Պատասխանատուի Հրամանով: Այս հատուկ հաստատությունների համար նահանգապետի կողմից սահմանված պայմաններից բացի՝ այս տեսակի բիզնեսները պետք է նաև հետևեն սույն Ստուգաթերթում սահմանված պայմաններին: Այն հաստատությունները, որոնք հավաստագրված են, որպես Վաղ խնամքի և Կրթական ծրագրեր, պետք է համապատասխանեն նաև Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության ուղեցույցին և ECE ծրագրերի համար՝ Վարակման Կառավարման Ծրագրին:

Ցանկացած ծրագիր, որը նախատեսում է տրամադրել դպրոցահասակ երեխաների խնամք և ընդլայնել իր գործունեությունը երեխաների խնամքի ներկայիս արտոնագրի սահմաններից դուրս կամ լիցենզայից զրկված կարգավիճակի սահմաններից դուրս, պետք է հաղորդակցվի Համայնքային Խնամքի Արտոնագրման Տարածաշրջանային Գրասենյակի հետ՝ պարզելու, թե արդյոք իրենցից պահանջվում է ապահովել արտակարգ իրավիճակներում արտոնագրային լրացուցիչ պահանջներից հրաժարում: Երեխաների խնամքից հրաժարվելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս PIN 20-22-CCP:

ՀԱՏՈՒԿ ՆՇՈՒՄ K-12 ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ: Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը պահանջում է K-12 դպրոցի տարածքում դպրոցահասակ երեխաների ցանկացած տեսակի ցերեկային խնամք ապահովող դպրոցները լրացնեն և վարչությանն ուղարկեն ծանուցում՝ նկարագրելով երեխաների խնամքի գործունեության շրջանակը և երեխաների խնամքով զբաղվելու արտոնագիրը կամ արտոնագրից հրաժարման կարգավիճակը: Լրացնելու հրահանգները և առցանց հարցման հղումը հասանելի են այստեղ:

- Եթե դուք ECE ծառայություններ մատուցելու արտոնագիր ունեք և սպասարկում եք միայն նախակրթարանային կամ ավելի ցածր տարիքային խմբերի երեխաների, ձեզնից **ՉԻ** պահանջվում ուղարկել այս ծանուցումը:
- Եթե ձեր ծրագիրը դպրոցահասակ երեխաների խնամք է տրամադրում ցանկացած միջավայրում, բացի K-12 դպրոցների տարածքից, ձեզնից **ՉԻ** պահանջվում ուղարկել այս ծանուցումը:

Խնդրում ենք նկատի ունենալ. այս փաստաթուղթը կարող է թարմացվել կախված լրացուցիչ տեղեկությունների և ռեսուրսների հասանելիությունից, ուստի անպայման կանոնավոր կերպով ստուգեք Լոս Անջելես Շրջանի կայքը http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/ այս փաստաթղթի թարմացումների մասին տեղեկանալու համար:

Կասեցված է՝ այլևս կիրառելի չէ

Այս ստուգաթերթն ընդգրկում է.

(1) Աշխատավայրի քաղաքականություններ և գործելակերպեր՝ ուղղված աշխատակիցների առողջության պահպանմանը:

(2) Ֆիզիկական հեռավորություն ապահովող միջոցառումներ:

(3) Վարակի վերահսկողություն ապահովող միջոցառումներ:

(4) Հաղորդակցությունը աշխատակիցների և հանրության հետ:

(5) Կարևորագույն ծառայություններին անաչառ հասանելիություն ապահովող միջոցառումներ:

Նշված հինգ ոլորտները պետք է իրականացվեն, մինչ ձեր հաստատությունը մշակում է վերաբացման որևէ արձանագրություն:

Այս ուղեցույցում ընդգրկված բոլոր ծրագրերը պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում կիրառելի չէ տվյալ ծրագրի համար:

Ծրագրի անունը. ______________________________

Հաստատության հասցեն. ______________________________

A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ (ՆՇԵՔ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

- ❑ Բոլոր նրանց, ովքեր կարող են իրենց աշխատանքային պարտականությունները կատարել տնից, հանձնարարվել է այդպես անել:
- ❑ Անձնակազմի խոցելի անդամներին (65 տարեկանից բարձր և, քրոնիկական հիվանդություններ ունեցող անձանց) հնարավորության դեպքում հանձնարարվում է այնպիսի աշխատանք, որը կարելի է կատարել տնից:
- ❑ Հնարավորության սահմաններում աշխատանքային գործընթացները վերակազմավորվում են՝ մեծացնելով աշխատակիցների՝ տնից աշխատելու հնարավորությունը: Դիտարկեք փոփոխված պարտականություններ պահանջող աշխատողներին, կամավորներին այնպիսի աշխատանքներ առաջարկելու հնարավորությունը, որոնք մինիմումի կհասցնեն ուրիշների հետ նրանց շփումը (օրինակ՝ ադմինիստրատիվ պարտականություններ)
- ❑ Հնարավորության դեպքում, փոփոխված կամ հերթափոխով ժամանակացույցեր են կիրառվում՝ ֆիզիկական հեռավորությունը առավելագույնի հասցնելու համար:
- ❑ Բոլոր աշխատակիցներին (այդ թվում՝ վճարվող անձնակազմին և կամավորներին, ովքեր հավաքականորեն անվանվում են «աշխատակիցներ») ասվել է չներկայանալ աշխատանքի հիվանդ լինելու դեպքում կամ եթե շփվել են COVID-19-ով վարակված անձի հետ: Աշխատակիցները հասկանում են, որ անհրաժեշտ է հետևել Հանրային Առողջապահության Վարչության ուղեցույցին՝ ինքնամեկուսացման և կարանտինի համար, եթե այն կիրառելի է: Աշխատավայրի արձակուրդի քաղաքականությունները վերանայվել և փոփոխվել են՝ ապահովելու, որ հիվանդության պատճառով տանը մնալու դեպքում աշխատակիցները չտուժեն:

- ❑ Տեղեկացվելով, որ մեկ կամ մի քանի աշխատակիցների թեստի արդյունքը դրական է, գործատուն պետք է տեղում ունենա պատրաստի ծրագիր կամ արձանագրություն, որպեսզի «հիվանդ(ներ)ը» մեկուսանա(ն) տանը, ինչպես նաև պահանջի, որ բոլոր աշխատակիցները, որոնք աշխատավայրում շփվել են «հիվանդի» հետ, անմիջապես ինքնակարանտինի ենթարկվեն: Գործատուի ծրագիրը պետք է ունենա COVID-19-ի թեստավորման հասանելիություն կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցների համար՝ պարզելու, թե արդյոք աշխատավայրում եղել են վարակման այլ դեպքեր, որոնք կարող են պահանջել COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ:
- ❑ Ախտանիշների ստուգումներն իրականացվում են, նախքան աշխատակիցները կմտնեն աշխատավայր: Հաստատությունը պետք է հետևի Հանրային Առողջապահության [Որոշումների Ուղիների](#) ուղեցույցին՝ նախատեսված այն անձանց համար, որոնց մոտ հայտնաբերվում են ախտանիշները կրթական հաստատություն մտնելուց առաջ կամ կրթական հաստատությունում գտնվելու ընթացքում: Ստուգումները պետք է ներառեն Որոշումների Ուղիներում նշված COVID-19-ի ախտանիշների ստուգում, ինչպես նաև հարցում, թե արդյոք աշխատակիցը տվյալ պահին գտնվում է մեկուսացման կամ կարանտին պահպանելու հրահանգների ներքո: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար կարգով կամ անհատապես՝ աշխատակցի ժամանելուն պես: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի ջերմաչափում:
- ❑ Հաստատություններից պահանջվում է Հանրային Առողջապահության Վարչությանը տեղեկացնել հաստատված COVID-19-ով վարակված բոլոր անձանց մասին, որոնք հիվանդության դրսևորմանը նախորդող 14 օրվա ընթացքում ցանկացած պահի գտնվել են հաստատության տարածքում: Հաստատված COVID-19-ով վարակված անձ է համարվում COVID-19-ի դրական թեստ ունեցող անձը: Հիվանդության սկիզբ է համարվում COVID-19-ի ախտանիշների դրսևորման առաջին օրը կամ COVID-19-ի թեստ հանձնելու օրը՝ կախված նրանից, թե որն է ավելի շուտ տեղի ունեցել:
- ❑ Հանրային Առողջապահության Վարչությանը COVID-19-ով վարակման դեպքերի մասին նախընտրելի է տեղեկացնել առցանց զեկուցման տարբերակով՝ համակարգչի կամ հեռախոսի միջոցով, որոնք հասանելիություն ունեն անվտանգ վեբ-հավելվածին՝ [http://www.redcap.link/lacdph.educationsector.covidreport:](http://www.redcap.link/lacdph.educationsector.covidreport) Եթե առցանց զեկուցել հնարավոր չէ, ապա կարելի է զեկուցել ինքնուրույն՝ ներբեռնելով և լրացնելով [COVID-19-ի Դեպքերի և Կոնտակտների Ցանկը Կրթական Ոլորտի համար](#), և այն ուղարկելով ACDC-Education@ph.lacounty.gov էլեկտրոնային հասցեին:
    - ○ 1 կամ 2 հաստատված դեպքերի մասին անհրաժեշտ է զեկուցել դեպք(եր)ի մասին տեղեկանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:
    - ○ Եթե 14 օրվա ընթացքում հայտնաբերվում է COVID-19-ով վարակման 3 կամ ավելի դեպք, գործատուն պետք է այդ խմբակային դեպքի մասին անմիջապես հաղորդի Հանրային Առողջապահության Վարչությանը: Հանրային Առողջապահության Վարչությունը կհամագործակցի ծրագրի հետ՝ որոշելու, թե արդյոք խմբակային դեպքը բռնկում է, որի դեպքում անհրաժեշտ կլինի հանրային առողջապահության կողմից բռնկման քննություն:
- ❑ Այն աշխատակիցներին, որոնք շփվում են ուրիշների հետ, անվճար տրամադրվում է դիմակ, որը ծածկում է քիթը և բերանը: Աշխատակիցը պետք է մշտապես կրի դիմակը ողջ աշխատանքային օրվա ընթացքում՝ այլ անձանց հետ շփվելու կամ շփման հավանականության պարագայում: Աշխատակիցները, ում բուժաշխատողները հանձնարարել են չկրել դիմակներ, պետք է կրեն ներքևի եզրին շղարշ ունեցող դեմքի վահաններ, որպեսզի համապատասխանեն Նահանգային պահանջների պայմաններին, եթե միայն նրանց վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են այն տեսակի շղարշները, որոնք մարմնի ձևն են ստանում կզակի տակ: Միակողմանի փականներ ունեցող դիմակները չպետք է կիրառվեն:
- ❑ Բոլոր աշխատակիցները պետք է մշտապես կրեն դիմակներ՝ բացառությամբ, երբ մենակ աշխատում են փակ դռներով սենյակներում, կամ ուտելիս կամ խմելիս: Նախկինում կիրառվող բացառությունն այն

Կասեցված է՝ այլևս կիրառելի չէ

աշխատակիցների համար, որոնք աշխատում էին ամուր պատնեշներով խցիկներում, որոնց բարձրությունը գերազանցում էր աշխատակցի հասակը կանգնած վիճակում, այլևս չի գործում:

- ❑ Աշխատակիցներին հանձնարարվում է ամեն օր լվանալ կամ փոխել իրենց դիմակները:
- ❑ Դիմակների պատշաճ և ճշգրիտ կիրառությունն ապահովելու համար աշխատակիցներին պետք է հորդորել չուտել կամ չխմել իրենց ընդմիջումների համար նախատեսված ժամերից բացի այլ ժամերի, երբ նրանք կարող են ապահով կերպով հեռացնել դիմակները և մյուսներից պահպանել ֆիզիկական հեռավորություն: Ուտելու և խմելու ամբողջ ընթացքում աշխատակիցները պետք է մյուսներից պահպանեն առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն: Հնարավորության դեպքում նախընտրելի է ուտել և խմել բացօթյա տարածքներում և հեռու գտնվել մյուսներից: Նախընտրելի է ուտել և խմել խցիկում կամ աշխատավայրում, քան ընդմիջումների սենյակներում, եթե խցիկում կամ աշխատավայրում ուտելն ապահովում է ավելի մեծ հեռավորություն մյուսներից և նախատեսում է պատնեշներ աշխատողների միջև:
- ❑ Զբաղվածությունը պետք է նվազեցվի, իսկ աշխատակիցների միջև տարածությունը պետք է հասցվի առավելագույնի ցանկացած սենյակում կամ տարածքում, որոնք օգտագործվում են աշխատակիցների կողմից ճաշելու և/կամ ընդմիջումների համար: Դա կարելի է իրականացնել հետևյալ տարբերակներով.
    - ○ Տեղադրել զբաղվածության առավելագույն սահմանափակում, որը համապատասխանում է անձանց միջև սենյակներում կամ ընդմիջումների համար նախատեսված վայրերում առնվազն վեց ոտնաչափ թույլատրող հեռավորությանը, և
    - ○ Դասակարգել ընդմիջումների և ճաշելու ժամերն այնպես, որ նվազեցվի զբաղվածությունը սենյակներում և ճաշելու և ընդմիջումների համար նախատեսված տարածքներում, և
    - ○ Տեղադրել սեղաններն առնվազն վեց ոտնաչափ հեռավորությամբ և ապահովել վեց ոտնաչափ տարածք նստատեղերի միջև, հեռացնել կամ տեղադրել նշումներ՝ նվազեցնելու համար զբաղվածությունը, հատակին տեղադրել նշաններ՝ ապահովելու հեռավորությունը և դասավորել նստելն այնպես, որ նվազագույնի հասցվի դեմ առ դեմ շփումը: Պատնեշների կիրառությունը խրախուսվում է հետագայում վարակի տարածումը կանխելու համար, սակայն չպետք է դիտարկվի որպես զբաղվածության նվազեցմանը կամ ֆիզիկական հեռավորության պահպանմանը փոխարինող միջոց:
- ❑ Աշխատակիցներին նաև առաջարկվում են ձեռնոցներ՝ կիրառելու այնպիսի աշխատանքների ժամանակ, ինչպիսիք են՝ սնունդ մատուցելը, աղբի հետ աշխատելը կամ մաքրող և ախտահանող նյութերը օգտագործելը:
- ❑ Աշխատակիցներին տրվել է ցուցում՝ հնարավորության դեպքում պահպանել առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորություն այցելուներից և միմյանցից հաստատության ամբողջ տարածքում: Անհրաժեշտության դեպքում աշխատակիցները կարող են մեկ ակնթարթով մոտենալ՝ օգնելու երեխաներին, կամ այլ անհրաժեշտության դեպքում:
- ❑ Պետքարանները և այլ ընդհանուր տարածքները ախտահանվում են հաճախակի, սակայն ոչ պակաս, քան օրական մեկ անգամ, հետևյալ ժամանակացույցով.
    - ○ Պետքարաններ ____
    - ○ Այլ ____
- ❑ Ախտահանիչներն ու այլ պարագաները աշխատակիցների համար հասանելի են հետևյալ վայր(եր)ում.

  ____
- ❑ COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքի ախտահանիչ միջոցը հասանելի է բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում.

  ____
- ❑ Աշխատակիցներին հիշեցվում է հաճախակի լվանալ ձեռքերը:

- ❑ Այս արձանագրության պատճենը բաժանվել է բոլոր աշխատակիցներին:
- ❑ Հնարավորության սահմաններում յուրաքանչյուր աշխատակից ստանում է իր անձնական պարագաները և հրահանգվում է խուսափել հեռախոսներ, պլանշետներ, երկկողմանի ռադիոկապ և այլ աշխատանքային պարագաներ համատեղ օգտագործելուց, եթե հնարավոր է: Նրանց նաև հրահանգված է երբեք համատեղ չօգտագործել անձնական պաշտպանիչ միջոցները:
- ❑ Պարագաները համատեղ օգտագործելու անհրաժեշտության դեպքում՝ դրանք ախտահանվում են տվյալ մակերեսի համար համապատասխան մաքրող միջոցով հերթափոխերի միջև կամ օգտագործվելուց հետո՝ կախված նրանից, թե որն է ավելի հաճախակի, այդ թվում՝ գրասենյակում համատեղ օգտագործվող սարքավորումները, ներառյալ՝ պատճենահանող սարքերը, ֆաքսային սարքերը, տպիչները, հեռախոսները, ստեղնաշարերը, կարիչները, կարիչ հանող գործիքները, գրենական պիտույքները, ընդունարանների տարածքների մակերեսները, համատեղ օգտագործման աշխատակայանները, աուդիո և տեսասարքավորումները, ռադիոսարքերը և այլն.
- ❑ Աշխատակիցներին տրամադրվում է ժամանակ իրենց հերթափոխի ընթացքում մաքրման գործողություններ կատարելու համար: Մաքրման հանձնարարությունները տրվում են աշխատանքային ժամերի ընթացքում՝ որպես աշխատակիցների աշխատանքային պարտականությունների մի մաս: Անհրաժեշտության դեպքում փոփոխեք ժամերը՝ ապահովելու պարբերաբար և պատշաճ մաքրում, ինչպես հարկն է: Մաքրման աշխատանքների մեծացած ծավալի կատարմանն օժանդակելու նպատակով, ըստ անհրաժեշտության, կարող են ներգրավվել երրորդ կողմ հանդիսացող մաքրման ծառայություններ առաջարկող ընկերությունները:
- ❑ Մշտապես դիտարկեք անձնակազմի բացակայությունները և հնարավորության դեպքում ունեցեք վերապատրաստված պահեստային անձնակազմ:
- ❑ Աշխատանքային պայմաններից բացի, այս ստուգաթերթում նկարագրված բոլոր քաղաքականությունները կիրառվում են ծառայություն մատուցող անձնակազմի և ցանկացած այլ ընկերությունների համար, որոնք ներկա են տարածքում որպես երրորդ կողմ:
- ❑ Ընտրովի. Նկարագրել այլ միջոցառումներ:

_____

B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԺԱՄԱՆՈՒՄ և ՄԵԿՆՈՒՄ

- ❑ Սահմանափակեք խմբատությունում գտնվող անձանց թիվը համապատասխան կերպով, որ հնարավոր լինի պահպանել ֆիզիկական հեռավորություն:
- ❑ Եթե տրանսպորտային միջոցները (օրինակ՝ ավտոբուսները) օգտագործվում են ծրագրի կողմից, վարորդները պետք է իրագործեն անվտանգության բոլոր գործողություններն ու արձանագրությունները, որոնք նախատեսված են մնացած անձնակազմի համար (օրինակ՝ ձեռքերի լվացում, դիմակ և ֆիզիկական հեռավորություն):
  - Տրանսպորտային միջոցներում նույնպես պետք է ֆիզիկական հեռավորության պահպանում կիրառել, օգտագործելով այնպիսի միջոցներ, ինչպիսիք են՝ ավտոբուսի/մեքենայի ամեն նստարանին մեկ երեխա նստեցնելով կամ ընդմիջվող շարքերով նստեցնելով:
  - Տրանսպորտային միջոցներում, հնարավոր դեպքերում, բացեք պատուհանները և առավելագույնի հասցրեք երեխաների և վարորդի միջև հեռավորությունը:
- ❑ Բոլոր երեխաները, անձնակազմի անդամները և այցելուները պետք է կրեն դիմակներ:
- ❑ Նվազագույնի հասցրեք աշխատակիցների, երեխաների և ընտանիքների միջև շփումը օրվա սկզբին

Կասեցված է՝ այլևս կիրառելի չէ

և ավարտին:

- ❑ Հնարավորության դեպքում, կազմակերպեք, որ երեխաներին թողնեն և վերցնեն հաստատության դռան մոտ, որպեսզի սահմանափակեք ծնողների և այցելուների թիվը, ովքեր կարիք կունենան շինություն մտնել:
- ❑ Կազմակերպեք երեխաների ժամանման և թողնելու ժամերը և վայրերը ճկուն գրաֆիկով, և որքան հնարավոր է հետևողականորեն՝ նվազագույնի հասցնելու համար ընտանիքների կողմից պլանավորման մարտահրավերները:
- ❑ Նախատեսեք մուտքի և ելքի ուղիներ՝ օգտագործելով հնարավորինս շատ մուտքեր: Գործարկեք այլ արձանագրություններ՝ սահմանափակելու մյուսների հետ շփումը՝ որքան դա գործնականում հնարավոր է.
- ❑ Ապահովեք ֆիզիկական ուղենիշներ, ինչպիսիք են՝ ժապավեններ գետնի կամ մայթերի վրա և նշաններ պատերին՝ ապահովելու, որ աշխատակիցները և երեխաները պահպանեն առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն շարքերում և այլ ժամանակ (օրինակ՝ նախասենյակներում «միակողմանի ուղիներ» ստեղծելու ուղեցույցներ և շարքեր՝ երեխաներին թողնելիս և վերցնելիս):

ՀԱՆԳՍՏԻ ՏԱՐԱԾՔՆԵՐ

- ❑ Երեխաների խնամքի աշխատանքները, բացօթյա և փակ տարածքներում, պետք է իրականացվեն հաստատուն/անփոփոխ խմբերում, որտեղ պահպանվում է ֆիզիկական հեռավորությունը երեխաների միջև և երեխաների ու աշխատողների միջև, և նրանք չեն խառնվում այլ հաստատուն խմբերին (“անփոփոխ” նշանակում է նույն երեխաները և անձնակազմի անդամները ամեն օր գտնվում են նույն խմբում, որքան հնարավոր է):

Հաստատուն/Անփոփոխ խմբերի առավելագույն չափը

- **Եթե ցերեկային խնամք տրամադրող ծրագիրը տվյալ պահին գործում է որպես չարտոնագրված ծրագիր.**

  Հաստատուն խմբերի առավելագույն չափը սահմանափակվում է երեխաների քանակով, ինչը թույլ է տալիս խմբի յուրաքանչյուր երեխաներին պահպանել 3 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն ծրագրի հասանելի տարածքում գտնվող մյուս բոլոր երեխաներից: Անձնակազմի անդամները պետք է 6 ոտնաչափ հեռավորություն պահպանեն երեխաներից և անձնակազմի մյուս անդամներից: Հաստատուն խմբի չափը չի կարող գերազանցել առավելագույնը 30 երեխաներ և վերահսկող երկու մեծահասակներ՝ անկախ ծրագրի հասանելի տարածքի չափից:

- **Եթե ցերեկային խնամքի ծառայություններ մատուցող ծրագիրը տվյալ պահին ունի երեխաների խնամքի արտոնագիր, կամ ծրագրին շնորհվել է երեխաներին արտակարգ խնամք տրամադրելու թույլտվություն** Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության Համայնքային Խնամքի Արտոնագրման Բաժնի (CCLD) կողմից, հաստատուն խմբերի առավելագույն չափը սահմանափակվում է երեխաների այնպիսի քանակով, որը ծրագրի հասանելի տարածքում նրանց բոլորին թույլ է տալիս պահպանել առնվազն 3 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն մյուս բոլոր երեխաներից և առնվազն 6 ոտնաչափ՝ անձնակազմի բոլոր անդամներից: Անձնակազմի անդամները պետք է պահպանեն առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն անձնակազմի մյուս բոլոր անդամներից: Որևէ պահի հաստատուն խմբի չափը չի կարող գերազանցել CCLD-ի արտոնագրով կամ թույլտվությամբ հաստատված տարածքում (տարածքներում) թույլատրված երեխաների առավելագույն քանակը: Ցերեկային խնամքի ծրագրերից կարող է պահանջվել պահպանել հաստատուն խմբերն ավելի փոքր չափերով, քան առավելագույնս թույլատրված է CCLD-ի

Կաղապար՝ այլևս կիրառելի չէ

կողմից՝ համապատասխանելու սույն արձանագրությամբ սահմանված ֆիզիկական հեռավորություն պահպանելու պահանջներին:

- Եթե հաստատությունը ներառում է մեծ սենյակներ, ապա այդ սենյակները կարող են բաժանվել ավելի փոքր տարածքների՝ յուրաքանչյուրը ծառայելու մինչև 30 երեխայի, կամ այնքան թվով երեխաների, ինչը թույլ կտա բոլոր երեխաներին իրարից պահպանել առնվազն երեք (3) ոտնաչափ հեռավորություն և առնվազն վեց (6) ոտնաչափ՝ անձնակազմի անդամներից և վեց ոտնաչափ անձնակազմի անդամների միջև հասանելի տարածության սահմաններում՝ կախված դրանից, թե որի ընդհանուր թիվն ավելի փոքր կլինի: Բավականին ընդարձակ փակ տարածքներ, ինչպիսիք են՝ մարզասրահը կամ բազմաֆունկցիոնալ սենյակը, որը բաժանված է ավելի փոքր տարածքների, չեն կարող միաժամանակ օգտագործվել ավելի քան երեք հաստատուն խմբերի կողմից (առավելագույնը 90 երեխա): Սենյակները բաժանելու դեպքում պետք է ձեռնարկվեն հետևյալ նախազգուշական միջոցառումները.
  - Բաժանարարները տեղադրելիս պետք է հաշվի առնվեն հրդեհի անվտանգության և շրջակա միջավայրի կանոնակարգերը:
  - Սենյակի բաժանարարները պետք է ձգվեն հատակից մինչև առնվազն 8 ոտնաչափ բարձրության և պատրաստված լինեն ոչ ծակոտկեն նյութից, որը հնարավոր կլինի պարբերաբար մաքրել:
  - Սենյակի բաժանարարները պետք է տեղադրվեն այնպես, որ առավելագույնի հասցնեն օդափոխությունը և օդի հոսքը՝ թույլ տալով կանխել առողջ ջերմաստիճանը և հեռացնել աղտոտիչները:
  - Սենյակի բաժանարարները պետք է ապահովված լինեն հատակին այնպես, որ նվազագույնի հասցնեն սայթաքումների և ընկնումների վտանգը:
  - Բաժանելուց հետո յուրաքանչյուր տարածքում պետք է թողնել բավականաչափ տարածություն ֆիզիկական հեռավորություն պահպանելու համար (այսինքն՝ 3 ոտնաչափ հեռավորություն երեխաների միջև, 6 ոտնաչափ հեռավորություն երեխաների և անձնակազմի անդամների միջև և 6 ոտնաչափ հեռավորություն անձնակազմի անդամների միջև):
  - Բաժանված սենյակները պետք է նախագծված լինեն այնպես, որ երեխաների հաստատուն խումբը կարողանա մուտք գործել և դուրս գալ՝ առանց մյուս խմբին 6 ոտնաչափից ավել մոտենալու: Եթե կա 2 դուռ սենյակ մուտք գործելու համար, ապա խորհուրդ է տրվում, որպեսզի երեխաների յուրաքանչյուր խումբ ունենա առանձնացված հատուկ դուռ, որտեղից կօգտագործվեն միայն նրանք տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու համար:
  - Եթե (ելքի տարբերակ) պետք է երեխաներին հասանելի լինի բաժանված սենյակի յուրաքանչյուր կողմում: Յուրաքանչյուր տարածք պետք է ունենա մշտական և անխոչընդոտ ուղի՝ տվյալ տարածքի ցանկացած կետից դեպի անվտանգ վայր: Նշաններ պետք է փակցվեն բաժանարարների վրա կամ դրանց մոտ, որտեղ պետք է նշվեն դեպի ելքեր տանող ուղիները և այդ ուղիներից օգտվելու կարգը պետք է փորձարկվի տարհանման փորձնական վարժանքների ընթացքում՝ արտակարգ իրավիճակների ժամանակ անվտանգությունն ապահովելու համար:
- Բոլոր այցելուներից և երեխաներից պահանջվում է կրել դիմակ հաստատությունում գտնվելու ժամանակ, բացի այն դեպքերից, երբ նրանք քնած են, սնվում/խմում են կամ կատարում են ֆիզիկական վարժություն՝ միայնակ (օրինակ՝ վազում են միայնակ): Սա վերաբերվում է բոլոր չափահասներին և 2 տարեկան և ավելի մեծ երեխաներին: Միայն այն անձիք, ում բուժաշխատողը հանձնարարել է չկրել դիմակ, ազատվում են այս պահանջից: Ձեր աշխատակիցների և այլ այցելուների

Կապված է այլ կիսառնտ չէ

անվտանգությանն աջակցելու նպատակով՝ հարկավոր է դիմակներ տրամադրել այն այցելուներին, ովքեր գալիս են առանց դրանց:

- ❑ Հնարավորինս մեծացրեք նստատեղերի, սեղանների և մահճակալների միջև հեռավորությունը: Դիտարկեք այլ միջոցներով երեխաներին առանձնացնելու հնարավորությունը, օրինակ՝ վեց ոտնաչափ հեռավորություն նստատեղերի միջև, միջնորմներ նստատեղերի միջև, հեռավորություն խթանելու նպատակով նշումներ հատակին, նստատեղերի այնպիսի դասավորություն, որը նվազեցնում է դեմառդեմ շփումը:
- ❑ Դիտարկեք վերաձևավորման գործողություններ ավելի փոքր խմբերի համար և կահույքի ու խաղատարածքների վերադասավորում՝ առանձնացումը պահպանելու նպատակով:
- ❑ Անձնակազմը պետք է մշակի երեխաներին հասկանալի ձևով և ըստ նրանց տարիքային զարգացման մակարդակի միմյանցից հեռավորությունը մեծացնելու ցուցումներ, և միջոցներ՝ նվազագույնի հասցնելու երեխաների միջև սերտ շփումը և դրսի, և ներսի տարածքներում՝ օգտագործելով, օրինակ՝ հատակին նշումներ և նշաններ:
- ❑ Սահմանափակեք ոչ կարևոր այցելուներին, կամավորներին և այն գործողությունները, որոնք միաժամանակ ներառում են նաև այլ խմբեր:
- ❑ Սահմանափակեք խմբային գործողությունները, երբ հնարավոր է: Եթե հնարավոր չէ՝ օգտագործեք ոչ միաժամանակ, պատշաճ ձևով տարածություն պահպանեք անձանց միջև, պահեք խմբերը հնարավորինս փոքր և կայուն կազմով և ախտահանեք ամեն օգտագործումից հետո:
- ❑ Սահմանափակեք հավաքները և լրացուցիչ գործողությունները այն անձանցով, ովքեր կարող են պահել ֆիզիկական հեռավորություն և պահպանել ձեռքերի պատշաճ հիգիենա:
- ❑ Անհրաժեշտության դեպքում օգտվեք այլընտրանքային տարածքներից, այդ թվում՝ դրսի տարածքներից, եթե եղանակը թույլ է տալիս: Օրինակ՝ դիտարկեք դրսի տարածքը և կաֆետերիան ու օգտագործման այլ տարածքները մեծացնելու միջոցներ՝ թույլ տալու ֆիզիկական հեռավորություն:
- ❑ Որքան հնարավոր է նվազագույնի հասցրեք միասին գործողությունները:
- ❑ Երեխաների հետ հնարավորինս շատ գործողություններ իրականացրեք դրսում (բոլոր մարզական գործողությունները, երգեցողությունը և վանկարկումը պետք է տեղի ունենա միայն դրսում):

ՍՆՈՒՆԴ

- ❑ Հնարավորության դեպքում երեխաները պետք է բերեն իրենց սնունդը և պահպանեն ֆիզիկական հեռավորություն ուտելիս, կամ ուտեն իրենց փոքր խմբով՝ ընդհանուր սնվելու սրահի կամ սրճարանի փոխարեն: Ապահովեք սննդային ալերգիա ունեցող երեխաների անվտանգությունը:
- ❑ Օգտվեք սննդի սպասարկման մեկանգամյա օգտագործման պարագաներից (օրինակ՝ խոհանոցային պարագաներ և ափսեներ): Եթե մեկանգամյա օգտագործման պարագաների օգտագործում հնարավոր չէ, ապահովեք, որ սննդի սպասարկման բոլոր բազմակի օգտագործման պարագաները լվացվեն ափսեների օճառով և տաք ջրով կամ ափսե լվացող սարքում: Անհատները պետք է լվանան իրենց ձեռքերը սննդի սպասարկման օգտագործված պարագաներին դիպչելուց անմիջապես հետո:
- ❑ Եթե որևէ միջոցառման ժամանակ առաջարկվում է ուտելիք, բուֆետի կամ ընտանեկան ճաշկերույթի փոխարեն նախապես պատրաստեք տուփեր կամ պայուսակներ յուրաքանչյուր մասնակցի համար: Խուսափեք սննդի կամ պարագաների համատեղ օգտագործումից:

Այլևս կիրառելի չէ

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Ապահովեք, որ ամբողջ աշխատակազմը և ընտանիքները տեղյակ լինեն սանիտարական ընդլայնված գործողությունների, ֆիզիկական հեռավորության ուղեցույցների և դրանց կարևորության, դիմակների պատշաճ օգտագործման, հանելու և լվանալու կամ դեն նետման, ախտանիշների ստուգման գործողությունների և COVID-19-ի բացառման հատուկ չափանիշների մասին:
- ❑ Նշանակեք աշխատակից, ով պատասխանատու կլինի COVID-19-ի հետ կապված մտահոգություններին արձագանքելու համար: Երեխաների խնամքի ամբողջ աշխատակազմն ու բոլոր ընտանիքները պետք է իմանան, թե ով է այդ անձը և ինչպես կարելի է կապ հաստատել նրա հետ: Այս անձը պետք է վերապատրաստված լինի՝ համակարգելու փաստաթղթագրումն ու հետևելու վարակակրի հետ հնարավոր շփումներին, որպեսզի ծանուցի տեղի առողջապահության պատասխանատուներին, աշխատակազմին և ընտանիքներին՝ անհապաղ և պատասխանատու ձևով: Այս անձը պատասխանատու է նաև հաստատությունում գրանցված COVID-19-ի բոլոր դեպքերի մասին տեղական առողջապահական աշխատողներին հաղորդելու համար:
- ❑ Ապահովեք բավարար պարագաներ՝ օժանդակելու առողջ հիգիենայի վարքագծին, այդ թվում՝ օճառ, անձեռոցիկներ, անհպում աղբամաններ և առնվազն 60 տոկոս էթիլային սպիրտ պարունակող ձեռքի ախտահանիչներ, աշխատակազմի և այն երեխաների համար, ովքեր կարող են անվտանգ օգտագործել ձեռքի ախտահանիչը:
- ❑ Սովորեցրեք երեխաներին հետևյալ անձնական պաշտպանիչ միջոցառումները.
  - Լվացեք ձեռքերը կանոնավոր կերպով ուտելուց առաջ և հետո, հազալուց կամ փռշտալուց հետո, դրսում գտնվելուց հետո և պետքարանից օգտվելուց հետո:
  - Խուսափեք աչքերին, քթին և բերանին դիպչելուց:
  - Փակեք բերանը հազալիս կամ փռշտալիս:
  - Քիթը մաքելու համար օգտագործեք անձեռոցիկ և հազալիս/փռշտալիս փակեք բերանը անձեռոցիկով կամ թևմունկով:
- ❑ Դիտարկեք այնպիսի ռեժիմներ, որոնք հնարավորություն կտան աշխատակազմին և երեխաներին կանոնավոր կերպով լվանալ ձեռքերը տարբեր ընդմիջումներով:
- ❑ Երեխաները և աշխատակազմը պետք է լվանան ձեռքերը օճառով՝ 20 վարկյան տևողությամբ, օճառը քսելուց հետո լույս չփնելով, և ձեռքերը լավ չորացնելու համար օգտագործեն թղթե սրբիչներ (կամ մեկանգամյա օգտագործման կտորե սրբիչներ):
- ❑ Աշխատակազմը պետք է ձեռքերը լվանա և ծառայի որպես օրինակ: Օրինակ՝ ավելի երիտասարդ երեխաների համար, օգտագործեք լոգարանից օգտվելու ժամանակը որպես հնարավորություն՝ ամրապնդելու առողջարար սովորությունները և հետևելու, որ նրանք պատշաճ լվանան ձեռքերը:
- ❑ Երեխաները ու աշխատակազմը պետք է օգտագործեն ձեռքի ախտահանիչ, երբ հնարավոր չէ լվանալ ձեռքերը: Ախտահանիչն անհրաժեշտ է քսել ձեռքերին, մինչև այն ամբողջությամբ կչորանա: Նկատի ունեցեք. ձեռքերը հաճախակի լվանալը ավելի արդյունավետ է, քան ախտահանիչների օգտագործումը, հատկապես երբ ձեռքերը տեսանելիորեն կեղտոտ են:
  - 9 տարեկանից փոքր երեխաները պետք է օգտագործեն ձեռքի ախտահանիչը մեծահասակների հսկողությամբ: Ախտահանիչը կուլ տալու դեպքում զանգահարեք Թունավորումների Վերահսկման Կենտրոն՝ 1-800-222-1222 հեռախոսահամարով: Էթիլային սպիրտի հիմքով ձեռքի ախտահանիչները նախընտրելի են և պետք է օգտագործվեն, եթե հնարավոր է երեխաների կողմից դրանց օգտագործումը առանց վերահսկողության: Իզոպրոպիլենային ձեռքի ախտահանիչները

Արտոնված է՝ այլևս չի հրատարակվում

ավելի թունավոր են և կարող են ներծծվել մաշկի միջոցով: Մի օգտագործեք մեթանոլ պարունակող ապրանքները:

- ❑ Դիտարկեք տարածքում ձեռքերի լվացման շարժական կայաններ տեղադրել՝ հնարավորինս նվազագույնի հասցնելու տեղաշարժը և մարդկանց կուտակումը լոգարաններում:
- ❑ Կասեցրեք ցայտաղբյուրների օգտագործումը և դրա փոխարեն խրախուսեք բազմակի օգտագործման ջրի շշերի օգտագործումը:
- ❑ Հաճախակի հպման մակերեսները, ինչպիսիք են՝ դռան բռնակները, լույսի անջատիչները, լվացարանների բռնակները, լոգարանի մակերեսները, սեղանները և տրանսպորտային միջոցներում մակերեսները, պետք է մաքրվեն առնվազն ամեն օր և ավելի հաճախ օրվա ընթացքում, եթե հնարավոր է:
- ❑ Սահմանափակեք ընդհանուր օգտագործման խաղահրապարակների սարքավորումների օգտագործումը՝ փոխարենը նախապատվություն տալով ֆիզիկական գործողություններին, որոնք մակերեսների հետ ավելի քիչ շփում են պահանջում:
- ❑ Սահմանափակեք պարագաների և սարքավորումների համատեղ օգտագործումը, օրինակ՝ խաղալիքներ, խաղերի և արվեստի պարագաներ: Այլապես՝ մաքրեք և ախտահանեք դրանք ամեն օգտագործումից հետո:
- ❑ Հարկավոր է ունենալ բազմաթիվ խաղալիքներ և մանիպուլյատորներ, որոնք հեշտ են մաքրել և ախտահանել օրվա ընթացքում կամ յուրաքանչյուր երեխային տրամադրեք անհատական պիտակավորված խաղալիքներով և իրերով զամբյուղներ: Ապահովեք, որ խաղալիքները, որոնք դժվար է մաքրել (օրինակ՝ փափուկ խաղալիքները) կամ հանվում են դասարանից կամ ուշադիր վերահսկվում, որ օգտագործվեն միայն առանձին երեխաների կողմից:
- ❑ Մաքրող ապրանքներ ընտրելիս՝ օգտագործեք այն ապրանքները, որոնք ընգրկված են Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված՝ COVID-19-ի դեմ արդյունավետ ապրանքների «Ն» ցուցակում, և հետևեք ապրանքի ցուցումներին: Այս ապրանքները պարունակում են բաղադրիչներ, որոնք ավելի անվտանգ են ասթմա ունեցող անձանց համար:
- ❑ Օգտագործեք ախտահանիչներ, որոնց վրա նշված է, որ դրանք արդյունավետ են առաջացող վիրուսային պաթոգենների դեմ՝ հետևելով ապրանքի վրա նշված՝ նյութի նոսրացման մակարդակի և շփման ժամանակի վերաբերյալ ցուցումներին: Աշխատակիցներին վերապատրաստեք քիմիկատների վտանգների, արտադրողի ցուցումների և անվտանգ օգտագործման՝ Կալիֆորնիայի Մասնագիտական Անվտանգության և Առողջապահության Վարչության (Cal/OSHA) պահանջների վերաբերյալ:
- ❑ Մաքրման աշխատանքներ կատարող աշխատակազմը, ով պատասխանատու է տարածքը մաքրելու և ախտահանելու համար, պետք է ունենա պաշտպանիչ պատշաճ միջոցներ, այդ թվում՝ ձեռնոցներ, աչքերը պաշտպանող պարագաներ, շնչառական պաշտպանության պարագաներ և այլ համապատասխան պաշտպանիչ միջոցներ՝ ըստ ապրանքի ցուցումների պահանջի: Բոլոր սարքավորումները պետք է պահել երեխաների համար անհասանելի, և սահմանափակ հասանելիությամբ վայրերում:
- ❑ Մաքրելիս՝ օդափոխեք տարածքը մինչ երեխաների ժամանումը, պլանավորեք պատշաճ մաքրել այն ժամանակ, երբ երեխաները ներկա չեն: Օդափոխման համակարգը օգտագործելու դեպքում օգտագործեք այն պարամետրը, որը բերում է մաքուր օդ: Փոխեք և ստուգեք օդի ֆիլտրերը և ֆիլտրման համակարգերը՝ օդի օպտիմալ որակը ապահովելու համար:
- ❑ Եթե պատուհաններ բացելը անվտանգ չէ կամ վնաս է առողջությանը, դիտարկեք այլընտրանքային ռազմավարություններ օդի հոսքը բարելավելու համար, օրինակ՝ մեծացրեք ջեռուցման, օդափոխության և օդորակման համակարգերի օդի կենտրոնական ֆիլտրացիան (առնվազն 13 արդյունավետության հաշվետվության նվազագույն արժեքի ֆիլտրման չափով):

Ստեղծված է՝ ԱԱՀԱ Կիրառելի չէ

- Ձեռնարկեք քայլեր՝ ապահովելու, որ բոլոր ջրային համակարգերը (օրինակ՝ ցայտաղբյուրները, դեկորատիվ շատրվանները) անվտանգ են օգտագործման համար՝ հաստատության երկար ժամանակ փակ լինելուց հետո՝ նվազագույնի հասցնելու այնպիսի վարակների հավանականությունը, ինչպիսին է Լեգիոներների հիվանդությունը:

ՍՏՈՒԳԵՔ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

- Վերապատրաստեք աշխատակազմին և սովորեցրեք երեխաներին և նրանց ընտանիքներին, թե երբ նրանք պետք է մնան տանը և երբ կարող են վերադառնալ երեխաների խնամքի կենտրոն: Ակտիվորեն խթանեք աշխատակազմին և երեխաներին, ովքեր հիվանդ են կամ վերջերս մոտիկ շփում են ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ, մնալ տանը:
- Բացի աշխատակիցներին ժամանելուն պես ստուգելուց, բոլոր երեխաները հաստատություն ժամանելիս ևս պետք է ստուգվեն.
  - Դիտարկեք ժամանելուն պես բոլոր երեխաների առողջական վիճակի տեսողական ստուգումը, որի մեջ կարող է ներառվել առանց հպման ջերմաչափով երեխաների ջերմաչափում ամեն օրվա սկզբին: Եթե առանց հպման ջերմաչափերը հասանելի չեն, ընդունելի է նաև հաղորդված ջերմության գնահատումը:
  - Հաստատությունը պետք է հետևի Հանրային Առողջապահության՝ Որոշումների Ուղիների ուղեցույցին՝ նախատեսված այն անձանց համար, որոնց մոտ հաստատվում են ախտանիշները կրթական հաստատություն մտնելուց առաջ կամ կրթական հաստատությունում գտնվելու ընթացքում: Բոլոր անհատներին հարցրեք վերջին 24 ժամվա ընթացքում COVID-19-ի ախտանշանների մասին և թե արդյոք նրանց տանը որևէ մեկը ունեցել է COVID-19-ի դրական թեստ: Անց են կացվում նաև ախտանշանների ստուգումներ՝ նախքան այցելուներին կթույլատրվի հաստատություն մտնել: Ստուգումները պետք է ներառեն Որոշումների Ուղիներում նշված՝ հնարավոր COVID-19-ի ախտանիշների ստուգում: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավոր անհատապես կամ այլընտրանքային եղանակներով, օրինակ՝ ստուգման առցանց համակարգերով կամ հաստատության մուտքի մոտ փակցված նշաններով որոնք տեղեկացնում են, որ նման ախտանիշներով այցելուները չպետք է տարածք մտնեն:
- Բացառեք բոլոր երեխաներին, ծնողներին, խնամողներին կամ աշխատակիցներին, որոնց մոտ դրսևորվում են COVID-19-ին համահունչ ախտանիշներ, կամ հայտնի է, որ շփում են ունեցել հաստատված COVID-19 ունեցող անձի հետ:
- Մշտապես դիտարկեք աշխատակիցներին և երեխաներին օրվա ընթացքում՝ հիվանդության նշանների համար: Աշխատակիցներին և երեխաներին տուն ուղարկեք, եթե նրանց մոտ կա հնարավոր COVID-19 վարակին համապատասխանող ախտանիշներ: Ուղարկեք մարդկանց համապատասխան բժշկական հաստատություն, այլ ոչ թե տուն, եթե անհրաժեշտ է:

ԵԹԵ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԿԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ԵՆ

- Սահմանեք մեկուսացման սենյակ կամ տարածք՝ առանձնացնելու այն անձին, ով ունի COVID-19-ի ախտանշաններ:
- Ապահովեք, որ նրանք կրեն դիմակ կամ բժշկական դիմակ, եթե 2 տարեկանից մեծ են, և որ դիմակը դնելու և հանելու հետ կապված խնդիր չունեն, ինչպես նաև չեն դժվարանում շնչել՝ դիմակը դրած:
- Ախտանշաններ ունեցող երեխաները կամ անձնակազմը պետք է մնան մեկուսացման սենյակում մինչ նրանց կկարողանան տեղափոխել տուն կամ բժշկական հաստատություն, որքան հնարավոր է շուտ:
- Սահմանեք հիվանդ անձին ըստ անհրաժեշտության անվտանգ ձևով իրենց տուն կամ բժշկական

Կասեցված է՝ այլևս կիրառելի չէ

հաստատություն տեղափոխելու ընթացակարգեր: Անհապաղ զանգահարեք 9-1-1, եթե անձը ունի անընդհատ ցավ կամ ճնշում կրծքավանդակում, շփոթվածություն կամ կապտավուն շուրթեր կամ դեմք:

- ❑ Հաստատությունները պետք է հավաստիանան, որ ունեն առնվազն մեկ, բայց ցանկալի է մի քանի կոնտակտային համարներ արտակարգ դեպքերի համար՝ ապահովելու ժամանակին տեղեկացումը, եթե երեխայի մոտ հիվանդության նշաններ զարգանան:
- ❑ Խորհուրդ տվեք աշխատակազմի հիվանդ անդամներին և երեխաներին չվերադառնալ մինչև նրանք կբավարարեն հաստատություն վերադառնալու չափանիշներին, որոնք ներկայացված են կրթական հաստատություններում սիմպտոմատիկ անձանց համար նախատեսված Որոշումների Ուղիներում:
- ❑ Տեղեկանալով, որ անձնակազմի անդամի կամ երեխայի մոտ COVID-19-ի թեստը դրական է, հաստատությունը պետք է վարակված անձին հրահանգի մեկուսանալ տանը, իսկ վարակված անձի հետ շփում ունեցած բոլոր անձանց պետք է հրահանգի մնալ կարանտինում: Վարակման դեպքերը կվերանայվեն՝ գնահատելու, թե որ անձանց է անհրաժեշտ կարանտին պահպանել, ներառյալ՝ վարակված անձի հետ նույն խմբում կամ դասարանում գտնվող բոլոր անձանց կարանտին պահպանելու հնարավորությունը, եթե հնարավոր չէ բացառել վարակումը ամբողջ խմբում: Հավելյալ տեղեկությունների համար՝ տե՛ս Հանրային Առողջապահության Վարչության ուղեցույցները մեկուսացման (ph.lacounty.gov/covidisolation) և կարանտինի (ph.lacounty.gov/covidquarantine) մասին:
- ❑ Հաստատություններից պահանջվում է Հանրային Առողջապահության Վարչությանը տեղեկացնել հաստատված COVID-19-ով վարակած բոլոր անձանց մասին, որոնք հիվանդության դրսևորմանը նախորդող 14 օրվա ընթացքում ցանկացած պահի գտնվել են հաստատության տարածքում: Հաստատված COVID-19-ով վարակված անձ է համարվում COVID-19-ի դրական թեստ ունեցող անձը: Հիվանդության սկիզբ է համարվում COVID-19-ի ախտանիշների դրսևորման առաջին օրը կամ COVID-19-ի թեստ հանձնելու օրը՝ կախված նրանից, թե որն է ավելի շուտ տեղի ունեցել:
- ❑ Հանրային Առողջապահության Վարչությանը COVID-19-ով վարակման դեպքերի մասին նախընտրելի է տեղեկացնել առցանց զեկուցման տարբերակով՝ համակարգչի կամ հեռախոսի միջոցով, որոնք հասանելիություն ունեն անվտանգ վեբ-հավելվածին՝ http://www.redcap.link/lacdph.educationsectorcovidreport: Եթե առցանց զեկուցումն հնարավոր չէ, ապա կարելի է զեկուցել ինքնուրույն՝ ներբեռնելով և լրացնելով COVID-19-ի Դեպքերի և Կոնտակտների Ցանկը Կրթական Ոլորտի համար, և այն ուղարկելով ACDC-Education@ph.lacounty.gov էլեկտրոնային հասցեին:
    - 1 կամ 2 հաստատված դեպքերի մասին անհրաժեշտ է զեկուցել դեպք(եր)ի մասին տեղեկանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:
    - Եթե 14 օրվա ընթացքում հայտնաբերվում է COVID-19-ով վարակման 3 կամ ավելի դեպք՝ գործատուն պետք է այդ խմբակային դեպքի մասին անմիջապես հաղորդի Հանրային Առողջապահության Վարչությանը: Հանրային Առողջապահության Վարչությունը հիմնամագործակցի ծրագրի հետ՝ որոշելու, թե արդյոք խմբակային դեպքը բռնկում է, որի դեպքում անհրաժեշտ կլինի հանրային առողջապահության կողմից բռնկման քննություն:
- ❑ Փակեք այն տարածքները, որոնք օգտագործվել են հիվանդ անձի կողմից, և մի օգտագործեք դրանք մինչ մաքրելը և ախտահանելը: Սպասեք 24 ժամ մաքրելուց կամ ախտահանելուց առաջ: Եթե 24 ժամ հնարավոր չէ, սպասեք այնքան, որքան հնարավոր է:
- ❑ Ապահովեք ախտահանիչ միջոցների անվտանգ և ճիշտ օգտագործումը՝ օգտագործելով անձնական պաշտպանիչ միջոցներ և մաքրման համար խորհուրդ տրվող օդափոխություն: Մաքրման և ախտահանման պարագաները պահեք երեխաներից հեռու:
- ❑ Համավարակի կամ մեծ բռնկման ժամանակ, հանրային առողջապահության տեղական վարչության հետ խորհրդակցելով՝ երեխաների խնամքի համապատասխան պատասխանատուն կարող է դիտարկել, թե

Կասեցված է այլևս կիրառվում չէ

արդյոք փակելը երաշխավորված է, հաշվի առնելով դրա տևողությունը՝ կախված տվյալ համայնքի ռիսկի մակարդակից:

- Եթե ծրագիրը փակվել է, խրախուսեք աշխատակիցներին, աշակերտներին և նրանց ընտանիքներին չհավաքվել կամ շփվել որևէ տեղում: Սա ներառում է երեխաների խնամքի խմբային միջոցառումները, ինչպես նաև, օրինակ՝ հավաքվելը ընկերների տանը, սիրելի ռեստորանում կամ տեղի առևտրային մոլում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

- ❑ Պահեք յուրաքանչյուր երեխային պատկանող պարագաները առանձին և անհատական պիտակներով տարաներում, արկղերում կամ տարածքներում: Ապահովեք, որ անձնական իրերը տարվեն տուն ամեն օր՝ մաքրելու և ախտահանելու համար:
- ❑ Ապահովեք բավարար պարագաներով՝ հնարավորինս նվազագույնի հասցնելու հաճախակի հպման պարագաների ընդհանուր օգտագործումը (արվեստի պարագաներ, սարքավորումներ և այլն), կամ սահմանափակեք պարագաների միաժամանակ օգտագործումը երեխաների մեկ խմբում և ախտահանեք օգտագործման ընթացքում:
- ❑ Հնարավորության սահմաններում խուսափեք էլեկտրոնային սարքավորումների, հագուստի, խաղալիքների, գրքերի և այլ խաղերի կամ ուսման օժանդակ նյութերի ընդհանուր օգտագործումից:

D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Պահպանեք հաղորդակցման համակարգեր, որոնք թույլ են տալիս աշխատակազմին և ընտանիքներին ինքնուրույն հաղորդել ախտանշանների առկայության մասին և ստանալ անհապաղ ծանուցում՝ վարակակրի հետ շփման կամ փակելու մասին՝ պահպանելով գաղտնիությունը:
- ❑ Սույն արձանագրության պատճենը, կամ հաստատության կողմից տպագրված Լոս Անջելեսի Շրջանի COVID-19-ի Անվտանգության Համապատասխանության Վկայականը պետք է փակցվի հաստատության բոլոր հանրային մուտքերի մոտ: Լրացուցիչ տեղեկությունների կամ COVID-19-ի Անվտանգության Համապատասխանության ինքնուրույն վավերացման ծրագիրը լրացնելու համար այցելեք՝ http://publichealth.lacounty.gov/eh/covid19cert.htm: Հաստատությունները պետք է տեղում պահեն Արձանագրությունների պատճենները՝ ըստ պահանջի վերանայման համար:
- ❑ Նշաններ են տեղադրված ամբողջ տարածքում հիշեցնելու հրահանգիչներին և երեխաներին ֆիզիկական հեռավորության և դիմակների օգտագործման մասին:
- ❑ Փակցված են նշաններ, որոնք ցույց են տալիս այցելուներին, որ նրանք պետք է տանը մնան, եթե հիվանդ են շնչառական ախտանշաններով:
- ❑ Հաստատությունը առցանց (կայքերի, սոցիալական լրատվամիջոցների միջոցով և այլն) հստակ տեղեկություններ է տալիս ֆիզիկական հեռավորության, դիմակների օգտագործման և այլ հարցերի վերաբերյալ:

E. ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Առաջնահերթություն է տրվել երեխաների համար կարևորագույն ծառայություններին:
- ❑ Ձեռնարկվում են միջոցառումներ՝ ապահովելու ծառայություններ այն երեխաների համար, որոնք ունեն շարժունակության սահմանափակումներ և/կամ հանրային տարածքներում գտնվում են բարձր ռիսկի տակ:

Վերոհիշյալ միջոցառումներում չներառված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերի վրա, որոնք բիզնեսի սեփականատերը պետք է կցի այս փաստաթղթին:

Այս արձանագրության մասին ցանկացած հարցի կամ մեկնաբանության համար կարող եք կապնվել հետևյալ անձի հետ.

Բիզնեսի կոնտակտային անձի անուն՝ _____

Հեռախոսահամար՝ _____

Վերջին վերանայման ամսաթիվ՝ _____

Կասեցված է՝ այլևս կիրառելի չէ